

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	9
5.1. Բյուջեի եկամուտները	9
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականը սկսվել է բավական բարձր տնտեսական ակտիվության աճով (նախորդ տարվա արտաքին շուկերի դրական ազդեցությունների պայմաններում), որը պահպանվել է առաջին ամիսներին: Սակայն հունիսից նկատվել է տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղում: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ տարի արտաքին շուկի դրական տնտեսական հետևանքները սկսել են արտացոլվել մայիս-հունիս ամիսներից, և հետևաբար 2023թ. հունիսի հետ համեմատվող ժամանակահատվածի՝ նախորդ տարվա հունիսի տնտեսական ակտիվության ցուցանիշն արդեն իսկ պարունակում է դրական զարգացումները (այս երևույթն այլ կերպ կարող ենք անվանել բազայի էֆեկտ): Սա նշանակում է, որ 2023թ. լրացուցիչ դրական զարգացումներ տնտեսությունում չեն նկատվում, և տնտեսական աճի բարձր տեմպերը հետագայում կշարունակեն դանդաղել, քանի որ համեմատվող ժամանակահատվածում աստիճանաբար ավելի ու ավելի շատ կներառվեն բարձր աճի ամիսները: Այսպես, 2023թ. հունիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 6.8%՝ կրկնակի անգամ դանդաղելով նախորդ ամսվա աճից, մինչդեռ նախորդ տարվա հունիսին ՏԱՑ-ը արագացել էր 5.2 տոկոսային կետով: Հունվար-հունիս ամիսների ՏԱՑ-ը ևս դանդաղել է՝ կազմելով 11.4%՝ հունվար-մայիսի 12.5%-ի դիմաց:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2023թ. հունվար-հունիս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ի աճին կազմել են 9.2 և 3.9 տոկոսային կետ: Շինարարության ճյուղն էականորեն ավելի փոքր նպաստում է ունեցել՝ շուրջ 0.8

տոկոսային կետ, իսկ արդյունաբերության նպաստումը զգալիորեն նվազել է նախորդ ամսվա համեմատ՝ կազմելով 0.2 տոկոսային կետ:


Գյուղատնտեսության ոլորտում հունվար-հունիս ամիսներին գրանցվել է դրական դինամիկա, և ոլորտի աճը կազմել է շուրջ 2.0%՝ ընդհանուր ՏԱՑ-ի աճին նպաստելով 0.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-հունիս ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության ոլորտում 2023թ. հունիսին գրանցվել է զգալի անկում: Արդյունաբերության ոլորտի զարգացումները բավական տատանողական են վերջին ամիսներին: Մայիսին գրանցված համեստ աճից հետո հունիսին

արդյունաբերության ոլորտում գրանցվել է շուրջ 7.4% անկում, որը նույնպես կարող է պայմանավորված լինել բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա հունիսին գրանցվել էր էական աճ՝ շուրջ 19.2%: Հունվար-հունիս ամիսների տվյալներով արդյունաբերության աճը կազմել է ընդամենը 1.0%, որը բավական ցածր ցուցանիշ է՝ հաշվի առնելով տնտեսության ընդհանուր աճի տեմպը և արդյունաբերության կարևորությունը՝ որպես արտահանելի ճյուղ:

Արդյունաբերության հունվար-մայիս¹ ամիսների 3.0% աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 7.2% աճով, որի նպաստումը կազմել է 4.2 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում հունվար-մայիս ամիսներին շարունակվել են անկման միտումները, որի չափը խորացել է՝ կազմելով 5.3% (նախորդ ամսվա անկումը՝ 4.0%) և ընդհանուր արդյունաբերության աճին հակազդելով 1.4 տոկոսային կետով: «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 0.6%, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 11.7% աճ, որոնք արդյունաբերության աճին նպաստել են համապատասխանաբար 0.1-ական տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության աճը շարունակում է բավական բարձր մնալ: Շինարարության ոլորտի զարգացումները հիմնականում պայմանավորված են հիպոթեքային վարկերի համար վճարված տոկոսավճարների՝ եկամտային հարկից հետվերադարձի ծրագրի գործողությամբ, այլ ոչ թե արտաքին շուկերի դրական ազդեցություններով: Այդ պատճառով, շինարարության ոլորտում աճի տեմպի

¹ Արդյունաբերության հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Էական դանդաղում չի նկատվում: Ընթացիկ տարվա հունիսին աճը կազմել է 18.1%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով: Հունվար-հունիս ամիսներին շինարարության ոլորտի աճը կազմել է 17.0%՝ հունվար-մայիսի համեմատ արագանալով 0.3 տոկոսային կետով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտը բազայի էֆեկտն ամենաշատը կրող ոլորտներից է, հետևաբար այստեղ աճի տեմպի դանդաղումը բավական կտրուկ է տեղի ունեցել: Ծառայությունների ոլորտում հունիսին գրանցվել է ընդամենը 4.0% աճ՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 8.3 տոկոսային կետով: Կուտակային՝ հունվար-հունիս ամիսների աճը ևս էապես դանդաղել է՝ հասնելով 16.8%-ի՝ նախորդ ամսվա 19.9%-ի դիմաց:

Ծառայությունների ոլորտում, ըստ հունվար-մայիս ամիսների տվյալների², բարձր աճին մեծամասամբ՝ 9.5 տոկոսային կետով նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաօլորտի շուրջ 58.7% աճը: Էական նպաստում են ունեցել նաև «տրանսպորտ», «կացություն և հանրային սնունդ» և «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաօլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.3, 2.2 և 1.5 տոկոսային կետ:

² Ծառայությունների ոլորտի հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպերը դեռևս մնում են բարձր մակարդակում, սակայն այստեղ նույնպես նկատվում են աճի տեմպի դանդաղման միտումներ: Արտաքին զարգացումների դրական տնտեսական հետևանքներն առևտրի վրա դեռևս պահպանվում են, սակայն հունիսին մայիսի համեմատ արևտրի աճի տեմպը 8.3 տոկոսային կետով դանդաղել է՝ հասնելով 20.3%-ի: Արդյունքում կուտակային աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ կազմելով 23.6%՝ նախորդ ամսվա 24.5%-ի դիմաց:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ³, %




³ Արտահանման նախորդ ամիսների, ինչպես նաև նախորդ տարվա ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում նախկինում հրապարակվածի համեմատ որոշակիորեն փոխվել են աճի ցուցանիշները:

Արտահանման աճի տեմպը կտրուկ դանդաղել է: 2023թ. հունիսին արտահանման աճն էապես դանդաղել է՝ հասնելով 2.5%-ի, ինչը նախորդ ամիսների բարձր աճերի համեմատ գրեթե զրոյական ցուցանիշ է: Աճի տեմպի դանդաղումը կազմել է շուրջ 62.5 տոկոսային կետ, այն դեպքում, երբ նախորդ տարվա հունիսին աճի արագացումը կազմել էր 35.9 տոկոսային կետ: Այսինքն՝ աճի դանդաղումը գերազանցում է բազայի էֆեկտի չափը, ինչը մտահոգիչ է, քանի որ ստացվում է, որ աճի դանդաղումը պայմանավորված է ոչ միայն այդ գործոնով, այլ կան նաև ուրիշ՝ արտահանման վրա բացասական ազդեցություն ունեցող գործոններ: Արտահանման կուտակային՝ հունվար-հունիս ամիսների աճը նույնպես շարունակում է դանդաղել, սակայն դեռևս բարձր մակարդակում է մնում՝ կազմելով 72.8%: Այնուամենայնիվ, այս միտումների պահպանման դեպքում կուտակային աճը ևս զգալիորեն կդանդաղի:

2023թ. հունվար-մայիս ամիսների⁴ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի համապատասխանաբար 3.4, 12.3 և 16.7 անգամ աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել են 31.5, 31.2 և 19.0 տոկոսային կետ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁵, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես էականորեն դանդաղել է, սակայն բարձր է մնացել արտահանման աճի տեմպից: Ներմուծման ծավալները 2023թ. հունիսին աճել են շուրջ 33.8%-ով, այն դեպքում, երբ նախորդ ամսվա աճը կազմել

⁴ Արտաքին առևտրի հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

⁵ Ներմուծման նախորդ ամիսների, ինչպես նաև նախորդ տարվա ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում նախկինում հրապարակվածի համեմատ որոշակիորեն փոխվել են աճի ցուցանիշները:

էր շուրջ 54.5%: Ինչպես արտահանման դեպքում, այստեղ նույնպես աճի դանդաղման չափը գերազանցում է բազայի էֆեկտի չափին: Հետևաբար, ներմուծման պարագայում նույնպես գործ ունենք լրացուցիչ բացասական գործոնների ազդեցության հետ:


Ներմուծման աճը 2023թ. հունվար-մայիս ամիսներին⁶ հիմնականում պայմանավորված է եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 28.0, 24.0 և 16.7 տոկոսային կետով: Այս նույն ապրանքները նաև նպաստել էին արտահանման աճին, ինչը խոսում է վերարտահանման երկույթի շարունակականության մասին:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁷

Անվանական աշխատավարձի աճի տեմպը շարունակվում է պահպանվել բարձր մակարդակում, թեև նախորդ ամսվա համեմատ որոշակիորեն դանդաղել է: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 20.8%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.8 տոկոսային կետով)⁸ կազմելով 260,080.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 23.9%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.1 տոկոսային կետով)⁹ կազմելով 289,484.0 դրամ: Սակայն պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է զգալիորեն ավելի ցածր՝ 8.9% տեմպով և կազմել է 189,765.0 դրամ:



⁶ Արտաքին առևտրի հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:
⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-մայիսին, %



4. ՓՈՒՍԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)






ՀՀ դրամը հիմնական արժույթների նկատմամբ շարունակում է մնալ էապես արժևորված, իսկ Ռ-Դ ռուբլու նկատմամբ արժևորման տեմպը շարունակում է արագանալ: Հունվար-հունիս ամիսների ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 20.1%-ով, եվրոյի նկատմամբ՝ 21.7%-ով, իսկ Ռ-Դ ռուբլու նկատմամբ՝ 24.9%-ով: Ռ-Դ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը շարունակում է արագանալ, ինչն էական դժվարություններ կարող է ստեղծել դեպի Ռ-Դ ՀՀ ապրանքների արտահանման համար:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. հունիսին աճել են 15.6%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 2.5 տոկոսային կետով, իսկ հունվար-հունիս ամիսների աճը կազմել է 18.1%, որը ցածր է հունվար-մայիս ամիսների աճից 0.6 տոկոսային կետով: Բյուջեի եկամուտների աճի դանդաղումը պայմանավորված է ինչպես հարկային եկամուտների աճի դանդաղմամբ, այնպես էլ պաշտոնական դրամաշնորհների նվազմամբ: Պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհների տեսքով եկամուտները հունվար-հունիսին նվազել են 6.6%-ով, իսկ ոչ հարկային այլ եկամուտների աճը կազմել է 5.2%:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ 2023թ. հունվար-հունիսին կազմելով 19.0% և նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.7 տոկոսային կետով:

Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է հիմնական խոշոր հարկատեսակների՝ շահութահարկի (աճը՝ 44.9%), ԱԱՀ-ի (աճը՝ 20.2%) և եկամտային հարկի (աճը՝ 18.9%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 7.9, 6.3 և 4.6 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում են ունեցել պետական տուրքերի 53.1% և բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարի 56.7% նվազումները, որոնք հարկերի աճին հակազդել են համապատասխանաբար 3.4 և 3.2 տոկոսային կետով:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2022թ. հունվար-հունիս		2023թ. հունվար-հունիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	23.7	23.7	19.0	19.0
ԱԱՀ	18.8	6.1	20.2	6.3
Շահութահարկ	49.4	7.2	44.9	7.9
Եկամտային հարկ	7.9	2.2	18.9	4.6
Ակցիզային հարկ	12.7	0.7	24.8	1.3
Շրջանառության հարկ	27.4	0.5	33.0	0.7

Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	55.7	2.5	-56.7	-3.2
Մաքսատուրք	-63.6	-3.6	128.8	2.1
Սոցիալական վճար	44.2	1.2	46.9	1.5
Այլ հարկային եկամուտներ	18.8	0.5	47.5	1.2
Պետական տուրք	257.3	5.8	-53.1	-3.4

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը հունվար-հունիս ամիսներին շարունակել է մնալ բարձր: Ընդհանուր ծախսերի աճը հունվար-հունիս ամիսներին կազմել է 12.7%, որին 10.8 տոկոսային կետով նպաստել է ընթացիկ ծախսերի աճը: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) աճել են ավելի արագ տեմպով՝ 18.0%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 1.9 տոկոսային կետով: Սակայն հունվար-հունիս ամիսներին իրականացված կապիտալ ծախսերի ծավալը բավական փոքր է եղել՝ շուրջ 114.5 մլրդ դրամ, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածի պլանը կազմում է 214.9 մլրդ դրամ: Այսինքն՝ պլանի համեմատ կատարողականը կազմել է շուրջ 53.3%: Ընդ որում, նախորդ տարի նույն ժամանակահատվածում կապիտալ ծախսերի կատարողականը պլանի համեմատ կազմել էր 69.5%, ինչը նշանակում է, որ տեղի է ունեցել կատարողականի էական վատթարացում:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Պետական բյուջեի կատարումը շարունակում է շեղված մնալ պլանավորվածից, ընդ որում շեղման չափը աստիճանաբար մեծանում է: ՀՀ պետական բյուջեի ծախսերն ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսներին ավելի քիչ են եղել, քան եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ շուրջ 134.7 մլրդ դրամի չափով՝ նախորդ տարվա 72.4 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, ծախսերի քիչ լինելը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերի կատարողականի հետ կապված խնդիրներն ավելի են խորանում: Հարկ է նշել, որ առաջին կիսամյակում պլանավորվել էր ունենալ շուրջ 93 մլրդ դրամ պակասուրդ:


5.4. Պետական պարտք

2023թ. հունիսին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալի աճը դանդաղել է՝ կազմելով 11.8%: Իսկ դրամային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքը աճել է 5.8%-ով: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճել է 12.5%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 6.4%-ով: Քանի որ զարգացումների այս պատկերի հիմնական պատճառը ՀՀ դրամի արժևորումն է, դիտարկելով դրամով արտահայտված ներքին պարտքը՝ նշենք, որ այն հունիսին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 28.5%-ով, իսկ դոլարային արտահայտությամբ արտաքին պարտքը նվազել է 1.0%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում շարունակել է աճել՝ հունիսի վերջի դրությամբ հասնելով 44.2%-ի:

2023թ. հունիսին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները սկսել են նվազման միտում դրսևորել: Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. հունիսին նախորդ ամսվա

համեմատ նվազել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 11.2%, սակայն նախորդ տարվա նույն ամսվա համեմատ դեռևս գտնվում է բարձր մակարդակում՝ շուրջ 0.6 տոկոսային կետով: Նմանատիպ պատկեր է նաև միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքի մասով, որը նվազել է նախորդ ամսվա համեմատ 0.5 տոկոսային կետով, սակայն նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշից բարձր է 0.2 տոկոսային կետով: Պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը պայմանավորված է ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցմամբ:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



2023թ. հունիսին գնաճը մտել է բացասական տիրույթ: 2022 թվականին և 2023թ. սկզբում արձանագրված բարձր գնաճի տեմպը կտրուկ դանդաղել է՝ դառնալով բացասական, ինչը նշանակում է, որ հունիսին գների մակարդակը 0.5%-ով նվազել է նախորդ տարվա հունիսի նկատմամբ: ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը հունիսին նվազեցրել է 0.25 տոկոսային կետով: Սակայն, թվում է, թե ԿԲ-ն 2022-2023 թվականներին չափազանց ագրեսիվ քաղաքականություն է վարել գնաճը զսպելու նպատակով, ինչը ներկայումս բերել է թիրախից էապես ցածր (որը նույնպես ցանկալի երևույթ չէ) գնաճի արձանագրմանը:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2023թ. հունիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդները շարունակել են աճել բարձր տեմպով: 2023թ. հունիսի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 27.3%-ով՝ մայիսի համեմատ արագանալով 0.8 տոկոսային կետով: Ավանդների ծավալի բարձր աճը պայմանավորված է ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, սակայն վերջիններիս աճի տեմպն էականորեն բարձր է և կազմում է շուրջ 38.4%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 10.5 տոկոսային կետով, իսկ ոչ ռեզիդենտների ավանդների նպաստումը ընդհանուր ավանդների աճին կազմել է 8.9 տոկոսային կետ: Ռեզիդենտների ավանդների շարքում էական նպաստում է ունեցել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է շուրջ 6.1 տոկոսային կետ:

6.3. Վարկեր


Վարկերի ծավալների աճի տեմպն ավելի կտրուկ է արագացել: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2023թ. հունիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 14.6%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 4.8 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճի հաշվին, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 14.3 և 0.4 տոկոսային կետ:

Գծապատկեր 19. Ռեզիդենտների տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 20.9% աճով: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճի տեմպը կտրուկ արագացել է՝ հասնելով 9.6%-ի՝ նախորդ ամսվա 3.0%-ի դիմաց:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների⁸ շարքում վարկերի աճին շարունակում են առավել մեծ նպաստում ունենալ հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 32.8%, իսկ նպաստման չափը՝ 6.2 տոկոսային կետ: Վարկերի աճին էականորեն նպաստել է նաև սպառողական վարկերի 16.2% աճը՝ ունենալով 3.5 տոկոսային կետ նպաստում: Ընդ որում, սպառողական վարկերի աճի տեմպը արագանում է վերջին ամիսներին:

Ծառայությունների, շինարարության և գյուղատնտեսության ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալները նույնպես զգալիորեն սկսել են նպաստել վարկերի աճին՝ համապատասխանաբար 3.2, 1.9 և 0.8 տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալը նվազել է 4.7%-ով՝ ընդհանուր վարկերի ծավալին ունենալով 0.6 տոկոսային կետով բացասական նպաստում, որը նույնպես արտացոլում է արդյունաբերության ոլորտում առկա խնդիրները:

⁸ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը⁹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը կտրուկ կրճատվել է և վերջին ամիսներին մնում է ցածր մակարդակում: 2023թ. մայիսին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 47.6 մլն ԱՄՆ դոլար՝ էապես ցածր լինելով տարեսկզբի և նախորդ տարվա վերջին ամիսների ցուցանիշներից:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2023թ. տնտեսական աճի բարձր տեմպը սկսել է դանդաղել: Նախորդ տարվա արտաքին շուկերի դրական ազդեցությունների պահպանման պայմաններում 2023թ. սկզբից ՀՀ տնտեսական աճի տեմպը բավական բարձր է եղել, սակայն հունիսին զգալիորեն դանդաղել է բազայի էֆեկտի ազդեցությամբ, քանի որ նախորդ տարվա հունիս ամիսն արդեն իսկ պարունակում է դրական շուկերի հետևանքները: Սա նշանակում է, որ 2023թ. լրացուցիչ դրական զարգացումներ տնտեսությունում չեն նկատվում, և տնտեսական աճի բարձր տեմպերը հետագայում կշարունակեն դանդաղել, քանի որ համեմատվող ժամանակահատվածում աստիճանաբար ավելի ու ավելի շատ կներառվեն բարձր աճի ամիսները:

⁹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը մասական փոխանցումների տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:

2. Բավական մտահոգիչ են նաև արդյունաբերության ոլորտի զարգացումները: Արդյունաբերության ոլորտում մայիսի համեստ աճից հետո հունիսին գրանցվել է շուրջ 7.4% անկում, որը նույնպես կարող է պայմանավորված լինել բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա հունիսին գրանցվել էր էական աճ՝ շուրջ 19.2%: Միևնույն ժամանակ, հունվար-հունիս ամիսների տվյալներով արդյունաբերության աճը կազմել է ընդամենը 1.0%, որը բավական ցածր ցուցանիշ է՝ հաշվի առնելով տնտեսության ընդհանուր աճի տեմպը և արդյունաբերության կարևորությունը՝ որպես արտահանելի ճյուղ: Արդյունաբերության կշռի նվազումը տնտեսությունում նշանակում է ՀՀ տնտեսական պոտենցիալի նվազում, ինչը բացասաբար կանդրադառնա երկարաժամկետ տնտեսական աճի վրա:

3. Արտահանման աճի տեմպը կտրուկ դանդաղել է, ինչը մտահոգությունների տեղիք է տալիս: Արտահանման աճի տեմպը հունիսին նախորդ ամսվա աճի տեմպի համեմատ դանդաղել է շուրջ 62.5 տոկոսային կետով և կազմել է 2.5%: Ընդ որում, նախորդ տարվա հունիսին աճի արագացումը կազմել էր 35.9 տոկոսային կետ: Այսինքն՝ աճի դանդաղումը գերազանցում է բազայի էֆեկտի չափը, ինչը մտահոգիչ է, քանի որ ստացվում է, որ աճի դանդաղումը պայմանավորված է ոչ միայն այդ գործոնով, այլ կան նաև ուրիշ՝ արտահանման վրա բացասական ազդեցություն ունեցող գործոններ: Դրանց մասին առավել մանրամասն հնարավոր կլինի պատկերացում կազմել հաջորդ ամիս, երբ հասանելի կլինեն արտահանման կառուցվածքի վերաբերյալ ցուցանիշները:

4. Հունիսին գնաճը մտել է բացասական տիրույթ: Երկար ժամանակահատվածի բարձր գնաճից հետո, հունիսից արձանագրվել է գնանկում: Գնաճի տեմպի դանդաղումը չափազանց արագ է տեղի ունենում, ինչը կարող է բացասական հետևանքներ ունենալ տնտեսության համար: Ընդհանրապես գնանկումը դրական երևույթ չէ, և կենտրոնական բանկերը հիմնականում խուսափում են գնանկումային տիրույթ մտնելուց: Սակայն, ՀՀ ԿԲ-ն բավական ագրեսիվ քաղաքականություն իրականացրեց գնաճը զսպելու համար, ինչը նաև նպաստել է ներկայումս նման պատկերի արձանագրմանը: Հաշվի առնելով նաև բարձր տնտեսական աճի առկայությունը՝ ԿԲ-ն դժվար թե արագ նվազեցնի տոկոսադրույքը: Գների նվազումը կարող է շարունակվել նաև առաջիկա ամիսներին:

5. Պետական բյուջեի կատարումը և կապիտալ ծախսերի կատարողականը շարունակում են խնդրահարույց մնալ: 2022թ. հունվար-հունիս ամիսներին պետական բյուջեի կատարողականն էականորեն շեղվել է պլանավորվածից, ինչի արդյունքում ձևավորվել է շուրջ 134.7 մլրդ դրամի չափով հավելուրդ՝ պլանավորված 93 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն: Հավելուրդի նման մեծ չափերի արձանագրման պատճառներից է նաև կապիտալ ծախսերի էական

Թերակատարումը: Այսպես, թեև կապիտալ ծախսերը որոշակիորեն աճել են նախորդ տարվա համեմատ, դրանք թերակատարվել են շուրջ 46.7%-ով (շուրջ 100.4 մլրդ դրամով): Ընդ որում, նախորդ տարի նույն ժամանակահատվածում կապիտալ ծախսերի թերակատարումը պլանի համեմատ կազմել էր 30.5%, ինչը նշանակում է, որ տեղի է ունեցել կատարողականի էական վատթարացում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**